DOI: 10.61760/18290108-dho.25.3-26

ՀԱՏՈՒԿ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՈՒԺԵՐԻ ԱՃՈՂ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ*

Ա. Ռ. ԴԱՎԹՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի պետ – հրամանատարի տեղակալ

Ներածություն

Ժամանակակից հակամարտություններում վերանում են սահմանները սովորական պատերազմի և «գորշ գոտու» գործողությունների միջև, որտեղ ներգրավված են ոչ միայն պետական դերակատարներ, այլև պրոքսի ուժեր, ապստամբական խմբեր, մասնավոր ռազմական ընկերություններ և այլն: Ռազմական օպերացիաներն իրագործվում են բարդ և բազմագործոն օպերացիոն միջավայրում, հակառակորդի նկատմամբ առավելության հասնելու նպատակով նրա օպերատիվ դիմակայունության բաղադրիչների նկատմամբ ձեռնարկվում է անընդհատ ներգործություն ավանդական և ոչ ավանդական մարտավարությունների համակցմամբ: Բազմատիրույթ օպերացիաների հայեցակարգի վերլուծությունը լավագույնս շեշտում է պատերազմի վարման հինգ տիրույթներում՝ օդում, ցամաքում, ջրում, տիեզերքում և կիբեռտարածությունում, և երեք չափումներում՝ ֆիզիկական, տեղեկութային և մարդկային, ծավալվող գործողությունների փոխադարձ կապվածությունն ու ինտեգրված բնույթը[1]:

Դրված նպատակներին հասնելու համար բոլոր տիրույթներում հատուկ օպերացիաների վարմամբ խարխլվում է հակառակորդի «պատերազմավարության մեքենան»՝ հետախուզությունը, լոգիստիկ շղթաների գործունեությունը, տեղեկատվահոգեբանական միջավայրը, անձնակազմի դիմակայունությունը, կառավարման համակարգերը և տվյալներն օգտագործելու կարողությունները[2]: Հատուկ օպերացիաները պահանջում են ուժերի և միջոցների, մարտավարությունների, սպառազինության ու տեխնիկայի կիրառման նկատմամբ հատուկ մոտեցումներ: Դրանք հաճախ վարվում են թշնամական, արգելական, քաղաքական կամ դիվանագիտական առումով զգայուն

* Հոդվածն ստացվել է 25.04.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 18.08.2025:

[1] Տես “FM 3-0. Operations”. Headquarters, Department of the Army. Washington, D.C., 1 October 2022, P. 1-17 (https://irp.fas.org/doddir/army/fm3-0.pdf):

[2] Տես “Army Special Operation Forces in Multi-Domain Operations. Catalog”. Center for Army Lessons Learned, P. 2 (https://api.army.mil/e2/c/downloads/2023/01/31/9f26acee/21-646-army-special-operations-forces-in-multi-domain-operations-catalog-aug-21-public.pdf):

միջավայրներում, ունեն գաղտնի բնույթ, բնորոշվում են ցածր աստիճանի տեսանելիությամբ, ժամանակային սահմանափակությամբ, բարձր ռիսկայնությամբ, տեղի ուժերի հետ կամ դրանց միջոցով ձեռնարկվող գործողություններով և այլն[3]:

Հատուկ օպերացիաները ենթադրում են ռազմավարական կամ օպերատիվ խնդիրների կատարման նպատակով փոքրաթիվ, սակայն սովորական ուժերին իրենց հմտություններով ու կարողություններով զգալիորեն գերազանցող ուժերի օգտագործում ուղղակի կամ անուղղակի գործողություններում: Այս համատեքստում իրենց օպերատիվ հարմարվողականության, ոչ ավանդական եղանակներով ազգային ռազմական ռազմավարության խնդիրների կատարման և ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման ունակության շնորհիվ Հատուկ օպերացիաների ուժերը (ՀՕՈՒ) դիտվում են որպես առանցքային դերակատարներ: ՀՕՈՒ-ն սահմանվում է որպես «ՑԶ, ՌՕՈՒ-ի և ՌԾՈՒ-ի՝ մեծ շարժունությամբ օժտված, հատուկ ուսումնավարժեցված, տեխնիկապես զինված, լավ հանդերձավորված խմբավորում, որը նախանշանակված է պետության շահերի պաշտպանության նպատակով հատուկ խնդիրների կատարման համար (անհրաժեշտության դեպքում՝ ուժի կիրառմամբ) ինչպես պետության սահմաններում, այնպես էլ դրանցից դուրս, թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական ժամանակ, և որը պահպանվում է անմիջական կիրառմանը մշտական ու բարձր աստիճանի պատրաստությունում»[4]: Պետությունների ՀՕՈՒ-ն ներգրավվում է և՛ լայնածավալ ռազմական գործողություններում, և՛ «գորշ գոտու» գործողություններում՝ հանդես գալով որպես հակառակորդին զսպելու արդյունավետ միջոց: Միևնույն ժամանակ, ՀՕՈՒ-ի նշանակությունն էականորեն աճում է հատկապես սուղ ռեսուրսների տիրապետող պետությունների ռազմավարությունների շրջանակում, քանի որ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, սահմանափակ ռեսուրսների պայմաններում ՀՕՈՒ-ի կիրառմամբ հնարավոր է հասնել ռազմավարական գերազանցության առանց լայնածավալ ռազմական գործողություններ ձեռնարկելու:

ՀՕՈՒ-ի առաքելությունը և նրա առջև դրված խնդիրները

Ըստ առաջավոր բանակների հայեցակարգային փաստաթղթերի՝ պետությունների հատուկ ուժերը, սովորական (անմիջական) գործողություններից զատ, մասնագիտացած են այնպիսի խնդիրների կատարման գործում, ինչպիսիք են հատուկ հետախուզության վարումը, ոչ ավանդական, հակաահաբեկչական, տեղեկատվական գործողությունների վարումը, ներգրավված են զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարում, մասնակցություն օտար պետության ներքին պաշտպանությանը և մար-

[3] Տես “Joint Publication 3-05. Special Operations”, 16 July 2014, P. I-1 (https://irp.fas.org/doddir/dod/jp3_05.pdf):

[4] Տես «Ռազմագիտական հասկացությունների և տերմինների հանրագիտարանային բառարան (նախագիծ)», մաս 2: «Աշխատանքային տետրեր», 2022, հմ. 9, էջ 42–43:

դասիրական օգնություններում, պատանդների ազատման օպերացիաներում, հակաապստամբական գործողություններում, ինչպես նաև քաղաքացիական նշանակությամբ օպերացիաներում[5]: Մասնավորապես՝ հատուկ հետախուզության և տեղեկատվական աջակցության օպերացիաների վարմամբ ՀՕՈՒ-ն կատարում է օպերատիվ միջավայրի պատրաստում՝ հակառակորդի ցամաքային բազավորմամբ և տիեզերքի հնարավորությունների օգտագործմամբ աշխատող ենթակառուցվածքների վրա ներգործելու, նրան մոլորեցնելու կամ կարողությունները քայքայելու նպատակով[6]: Օպերատիվ նախադրյալներ ստեղծելու նպատակով ՀՕՈՒ-ի խմբերը կատարում են նաև գաղտնի ներթափանցման առաջադրանքներ: Որպես օրինակ հետաքրքրական է 2016- 2017 թթ. Մոսուլի ճակատամարտի ժամանակ ԱՄՆ-ի և Իրաքի ՀՕՈՒ-ների գաղտնի ներթափանցման և հետախուզական գործողությունները, ինչով նախապատրաստվեց լայնածավալ հարձակումը «Իսլամական պետության» վերահսկողության տակ գտնվող քաղաքների վրա[7]:

Ժամանակակից հակամարտությունների փորձը ցույց է տալիս հակամարտության ծավալման (էսկալացիայի) փուլում կամ ճգնաժամային իրավիճակում ՀՕՈՒ-ի՝ որպես համապիտանի գործիքի կիրառման արդյունավետությունը թիրախ պետությունում քայքայիչ և ապակայունացնող գործողությունների վարման, վճռական որոշումներ կայացնող անձանց չեզոքացման կամ պատերազմը սնուցող ենթակառուցվածքների ոչնչացման նպատակներով[8]: Այս տեսանկյունից վերջին զինված հակամարտությունների սանձազերծման ու ծավալման փորձից մասնավորապես ուշագրավ են Իրանի և Իսրայելի միջև 12-օրյա պատերազմի ամբողջ ընթացքում իրանական ռազմաքաղաքական վերնախավի և գիտական ներուժ ներկայացնող անհատների նպատակային ոչնչացման գործողությունները, որոնք ստացան «Խոյացող առյուծ» *(“Rising Lion”)* անվանումը, կամ 2025 թ. հունիսի 1-ին ՌԴ տարածքում ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների, մասնավորապես՝ ռազմական ավիացիայի, ոչնչացմանն ուղղված «Սարդոստայն» *(«Паутина»)* օպերացիան: Տիպիկ օրինակ է նաև 2003 թ. «Ազատություն Իրաքին» *(“Iraqi Freedom”)* օպերացիան, երբ ԱՄՆ-ի 4-րդ հետևակային դի-

[5] Տես, օրինակ, “Joint Publication 3-05. Special operations”, 16 July 2014, P. 11 (https://irp.fas.org/doddir/dod/jp3_05.pdf):

[6] Տես *B. Hamel.* Reframing the Special Operations Forces-Cyber-Space Triad: Special Operations’ Contributions to Space Warfare. “Military Review”, 2024 (https://www.armyupress.army.mil/Portals/7/military-review/Archives/English/March-2024/Cyber-Space-Triad/SOF-Contributions-to-Space-UA.pdf):

[7] Տես “What the Battle for Mosul Teaches the Force”. “Mosul Study Group”, September 2017, N 17-25 U (https://api.army.mil/e2/c/downloads/2023/01/19/e9325e8b/17-24u-mosul-study-group-what-the-battle-for-mosul-teaches-the-force-sep-17-public.pdf):

[8] Տես *А. А. Зайцев.* О роли сил специальных операций в современных вооруженных конфликтах. «Труды БГТУ», 2019, серия 6, № 1 (https://cyberleninka.ru/article/n/o-roli-sil-spetsialnyh-operatsiy-v-sovremennyh-vooruzhennyh-konfliktah/viewer):

վիզիայի և ՀՕՈՒ-ի ինտեգրված գործողություններով հաջողվեց գերի վերցնել Սադամ Հուսեյնին և նրա հիմնական քաղաքական աջակիցներին: Պանամայում «Արդարացի գործ» *(“Just Cause”),* Պակիստանում «Նեպտունի նիզակ» *(“Neptune Spear”)* և այլ հատուկ օպերացիաներով ԱՄՆ-ն առանց լայնամասշտաբ գործողություններ ձեռնարկելու ստեղծեց նախադրյալներ՝ դրված ռազմաքաղաքական նպատակներին հասնելու համար:

ՀՕՈՒ-ի դերը ոչ ավանդական պատերազմում

Ոչ ավանդական պատերազմը ենթադրում է լայն սպեկտրի ռազմական ու ռազմականացված և, որպես կանոն, երկարատև օպերացիաներ, որոնք հիմնականում վարում են տեղի կամ այլ ուժերը, որոնց կազմակերպում, հանդերձավորում, ապահովում և ուղղորդում են արտաքին ուժերը: Դա ենթադրում է ընդհատակյա, օժանդակ կամ պարտիզանական ուժերի օգտագործում արգելական կամ քաղաքականապես զգայուն գոտիներում, այսինքն՝ այնտեղ, որտեղ կանոնավոր զինուժի կիրառումն անհնար է: Այս համատեքստում գործընկեր պետությունում ՀՕՈՒ-ի առաքելությունն է աջակցել պետական համակարգի դիմակայունությանը: Որպես օրինակ կարող ենք դիտարկել Իրաքի Մոսուլ քաղաքում «Իսլամական պետության» դեմ ԱՄՆ-ի վերը հիշատակված Հատուկ օպերացիաների ուժերի համադասած քաղաքային պարտիզանական մարտերը: Իրաքում ԱՄՆ-ի ՀՕՈՒ-ն աջակցում էր քրդական Փեշմերգա ուժերին և Իրաքի հատուկ նախանշանակման ուժերին՝ «Իսլամական պետության» դեմ պայքարում[9]: Մասնավորապես՝ ԱՄՆ-ի Հատուկ օպերացիաների ուժերի «Դելտա» ջոկատները ներգրավված էին ահաբեկչական կազմակերպության բարձրաստիճան հրամանատարության կետային ոչնչացման գործողություններում՝ հաջակցություն Իրաքի Զինված ուժերի առաջխաղացման[10]:

ՀՕՈՒ-ն կարող է նաև գործընկերային հարաբերություններ հաստատել և աջակցել տեղի ապստամբ կամ դիմադրության ուժերին՝ ընդդեմ իշխող ռազմաքաղաքական ղեկավարության[11]: 2012-2017 թվականներին ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության և Մերձավոր Արևելքում նրա որոշ դաշնակիցների ուժերով վարվեց «Սոսու փայտանյութ» *(“Timber Sycamore”)* գաղտնի օպերացիան, որի նպատակն էր Սիրիայում աջակցել ընդդիմադիր ուժերին Բաշար ալ Ասադի վարչակազմի դեմ պայքարում: ՀՕՈՒ-ի ստորաբաժանումները մարզում էին Սիրիայի ազատ բանակի և այլ խմբավորումների մարտիկներին՝ տրամադրելով նաև զենք և սպառազինութ-

[9] Տես “In a campaign far from over, help Peshmerga Commandos keep up the fight against the Islamic State”. “Spirit of America” (https://spiritofamerica.org/project/middle-east-help-peshmerga-fight-isis):

[10] Տես *A. Blomfield.* US ‘prepared Syrian rebel group to help topple Bashar al-Assad’. “The Telegraph”, 18 December 2024 (https://www.telegraph.co.uk/world-news/2024/12/18/us-prepared-syrian-rebel-group-to-help-topple-bashar-assad/):

[11] Տես “Unconventional Warfare”, 5 April 2016 (https://info.publicintelligence.net/USASOC-UW-PocketGuide.pdf):

յուն[12]: Այսպիսով՝ պրոքսի ուժերի օգտագործմամբ պետությունների հատուկ ուժերը կատարում են ռազմաքաղաքական շահերի առաջմղում՝ առանց լայնածավալ ռազմական ներգրավման:

Թշնամական պետությունում կամ թշնամու վերահսկողության տակ գտնվող տարածքում ՀՕՈՒ-ն առաջադրված խնդիրները կատարելու համար ձեռնարկում է, մասնավորապես՝

- քայքայիչ գործողություններ,
- ապօրինի զինված կազմավորումների գործողությունների պատրաստում և համադասում,
- տեղեկատվահոգեբանական օպերացիաների վարում, տեղի բնակչության շրջանում վախի և սարսափի տարածում,
- պետական իշխանության և զինված ուժերի բարձրագույն ղեկավար կազմի ոչնչացում[13]:

ՀՕՈՒ-ի ինտեգրված գործողություններ և գործակցություն մյուս ուժերի հետ

ՀՕՈՒ-ի գործողության մեթոդները բազմազան են և հիմնականում պայմանավորված են լուծվող խնդիրների տեսակով. ձեռնարկվում են դիվերսիոն-հետախուզական գործողություններ, կատարվում են գաղտնի ներթափանցումներ, իրագործվում են ասպատակություններ, դարանակալումներ, կարևոր օբյեկտների և դրանց մոտենալու ուղիների ականապատումներ: Հետախուզում մարտով և դիտախուզումը կատարվում են այնպիսի տվյալներ ձեռք բերելու նպատակով, որոնք հնարավոր չէ հայթայթել տեխնիկական հետախուզական սարքավորանքի միջոցով, ռեսուրսատար զանգվածեղ հարվածների փոխարեն հասցվում են կետային հարվածներ: Ժամանակակից պատերազմը պահանջում է ՀՕՈՒ-ի և կանոնավոր զինված ստորաբաժանումների գործողությունների ինտեգրում: Դրա օրինակ է 2020 թ. ԱՄՆ-ի Կենտրոնական հրամանատարության *(CENTCOM)* իրագործած համատեղ օպերացիան Մերձավոր Արևելքում, երբ ՀՕՈՒ-ն հավաքեց հետախուզական տվյալներ, տիեզերական հրամանատարությունը տրամադրեց արբանյակային տվյալներ, իսկ կիբեռստորաբաժանումները խափանեցին հակառակորդի կապի համակարգերը, արդյունքների համադրմամբ ավիացիոն ուժերը հասցրին կետային հարվածներ, իսկ ցամաքային զորքերն ապահովեցին տարածքի վերահսկողություն[14]:

---

[12] Տես *Øystein H. Rolandsen, Kjetil Selvik*. Disposable rebels: US military assistance to insurgents in the Syrian war. “Mediterranean Politics”, 2024, Vol. 29, N 4 (https://www.tandfonline.com/doi/pdf/10.1080/13629395.2023.2183664):

[13] Տես *Ա. Ա. Զայցև,* Նշ. աշխ.:

[14] Տես *Melissa Sidwell-Bowron, Matthew Winot.* The Intelligence, Surveillance, Reconnaissance Liaison Officer: A Critical Intelligence Node in Agile Combat Operations, 1 February 2023 (https://www.alssa.mil/News/Article/3283115/the-intelligence-surveillance-reconnaissance-liaison-officer-a-critical-intelli/):

ՀՕՈՒ-ն համակարգում է մարտադաշտում օդային, ցամաքային և ծովային միջոցների կիրառումը՝ ապահովելով գերճշգրիտ հարվածներ և արագ տարաշարժային պատերազմ վարելու հնարավորություն, ինչպես եղավ 2011 թ. ՆԱՏՕ-ի «Միասնական պաշտպան» *(“Unified Protector”)* օպերացիայի ժամանակ, երբ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ՀՕՈՒ-ները համակարգեցին օդային, ցամաքային և ծովային ուժերի համատեղ կիրառումը Լիբիայում Կադաֆիի ռազմական ենթակառուցվածքներին կործանիչ հարվածներ հասցնելու նպատակով[15]:

ՀՕՈՒ-ն՝ որպես բարձր տեխնոլոգիաներ կիրառող բաղադրիչ, առանցքային դեր է կատարում համատեղ կրակային աջակցության գործում՝ հակառակորդի ռազմական տեխնիկան և կապի հանգույցները մեծ ճշգրտությամբ խոցելու համար օգտագործելով ԱԲ-ով աշխատող վերլուծական համակարգեր: Բացի այդ, ինչպես ցույց է տալիս ռուս-ուկրաինական հակամարտության փորձը, ՀՕՈՒ-ի և կիբեռուժերի փոխգործությամբ արդյունավետորեն խափանվում է հակառակորդի կառավարման համակարգերի, հետախուզական ցանցերի և ռադիոտեղորոշումային համակարգերի աշխատանքը, ստեղծվում կամ ի հայտ են բերվում խոցելիությունները, որոնք հետագայում կարող են ի շահ իրենց օգտագործել կանոնավոր ուժերը: Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ հատկապես մատնանշվում է թույլատրված կամ արգելական գոտիներում ուժի՝ զինված հակամարտության շեմից ցածր պրոյեկտման, մրցակցության և հակառակորդի զսպման գործում ՀՕՈՒ-ի՝ կիբեռտիրույթ - տիեզերական տիրույթ համակցված գործողությունների կարևոր նշանակությունը[16]:

Հատուկ օպերացիաների ուժերի ինտեգրում կիբեռ- և տեղեկատվական տիրույթներում ձեռնարկվող գործողություններում

Հատուկ օպերացիաների ուժերի գործողությունների և կիբեռգործողությունների ինտեգրումը նոր հնարավորություններ է ստեղծում թշնամու կառավարման համակարգերի խափանման, էլեկտրոնային միջոցներով հետախուզական տվյալների հավաքման, կիբեռհարձակումներից կարևոր ենթակառուցվածքների պաշտպանության, ինչպես նաև տեղեկատվական օպերացիաներին ու ռազմավարական հաղորդակցությանն աջակցման համար[17]:

[15] Տես “Operation UNIFIED PROTECTOR: Protection of Civilians and Civilian-Populated Areas & Enforcement of the No-Fly Zone”. Public Diplomacy Division, October 2011 (https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/pdf_2011_10/20111005_111005-factsheet_protection_civ.pdf):

[16] Տես “The Future of Warfighting: SOF-Cyber Training” (https://www.boozallen.com/insights/cyber/the-future-of-warfighting-sof-cyber-training.html):

[17] Տես *D. Livermore.* Ukraine Special Operations Forces and the Lessons Learned for Large-Scale Combat Operations. “Small Wars Journal”, 31.01.2025 (https://smallwarsjournal.com/2025/01/31/ukraine-special-operations-forces/):

ՀՕՈՒ-ի ձեռնարկումներում կիբեռբաղադրիչի մեծացումը պայմանավորված է այն բազմապատկիչ էֆեկտով, որը հնարավոր է ստանալ կիբեռգործիքակազմի, օրինակ՝ արհեստական բանականությամբ գեներացված վնասաբեր ծրագրերի, «զրոյական» կիբեռզրոհների, կիբեռլրտեսական ծրագրերի, կիբեռներթափանցումների կամ կիբեռարգելափակումների կիրառմամբ:

Աշխարհում ռազմատնտեսական մրցակցության սրման պայմաններում անանուն ծրագրահենային խմբերի անվան տակ հանդես են գալիս հետախուզական, կիբեռ- և հատուկ նախանշանակման ուժեր՝ տնտեսական կիբեռհետախուզության, կիբեռքարոզչության և կիբեռդիվերսիաների կազմակերպմամբ համակարգչային համակարգերում եղած թվային ռեսուրսների, տեղեկույթի և տվյալների մատչելիությունն ապահովելու, առանց թույլտվության օգտագործելու կամ շարքից հանելու նպատակով[18]: Նման ձեռնարկումների վառ օրինակ է «Օլիմպիական խաղեր» օպերացիան, որի ժամանակ ուրանի հարստացման Նաթանզի գործարանի դեմ դիվերսիա ձեռնարկելու նպատակով կիրառվեց «Ստաքսնետ» կոչվող վիրուսը: Հետևանքը եղավ այն, որ շարքից հանվեց 1000-ից ավելի ցենտրիֆուգ, առաջ եկան իրական ֆիզիկական ավերածություններ և ավելի քան մեկ տարով կասեցվեց Իրանի միջուկային առաջընթացը: «Ստաքսնետը» վիրուսի առաջին նմուշն էր, որը խափանեց ոչ միայն ծրագրային ապահովումը, այլև առաջ բերեց իրական ֆիզիկական ավերածություններ: Հարձակման մեխանիզմը ներառում էր «Ռիինդոուզ» *(Windows)* օպերացիոն համակարգի խոցելիությունների օգտագործումը և Սիմենսի վերահսկման ու տվյալների ձեռքբերման *(Supervisory Control and Data Acquisition)* համակարգերով ձեռնածությունները[19]: «Ստաքսնետի» կիրառումը նշանավորեց կիբեռպատերազմի նոր դարաշրջանի սկիզբը՝ պետություններին ստիպելով վերանայել ոչ ավանդական գործողությունների վարման, ինչպես նաև դրանց դիմակայման կարողությունների զարգացման իրենց ռազմավարությունները:

Ռուս-ուկրաինական հակամարտության ֆոնին է՛լ ավելի ընդգծվեց հատուկ օպերացիաներում կիբեռգործիքակազմի օպերատիվ կիրառության արդյունավետությունը, երբ 2022 թ. փետրվարին սկիզբ առած կինետիկ գործողություններին զուգահեռաբար գրանցվեցին կիբեռներթափանցումներ «Վիասատ» ընկերության ԿԱ-ՍԱՏ արբանյակային ցանց, ինչի հետևանքով Ուկրաինայում կապի խափանմամբ խաթարվեց ռազմական և քաղաքացիական ենթակառուցվածքների աշխատանքը: Ամբողջ Եվրոպայում խափանվեցին տասնյակ հազարավոր բանկային ծայրասարքեր (տերմինալներ), իսկ Գերմանիայում կանգ առավ հողմակայանների աշխատանքը: ԱՄՆ-ի և եվրո-

[18] Տես *А. А. Рязанов.* Кибероперации как инструмент межгосударственной военно-экономической конкуренции. «Вестник Московского университета имени С. Ю. Витте». Серия 1. «Экономика и управление», 2021, № 2 (37) (https://cyberleninka.ru/article/n/kiberoperatsii-kak-instrument-mezhgosudarstvennoy-voenno-ekonomicheskoy-konkurentsii/viewer):

[19] Տես *Գ. Բահգաւ,* Իրանա-իսրայելական առճակատում. կիբեռտիրույթ: «ՀԲ», 2022, հմ. 1:

պական հետախուզական ծառայությունները հարձակումը վերագրեցին ռուսական ծրագրահենային խմբերին[*]: Ֆիզիկական և կիբեռ- տիրույթներում հատուկ գործողությունների համակցման այս և նմանատիպ այլ օրինակներ արդարացնում են առաջավոր բանակներում ՀՕՈՒ-ի և կիբեռուժերի առավել բարձր աստիճանի ինտեգրման միտումը, ինչպես նաև տվյալ տեսանկյունից ուսումնավարժեցման ու օպերատիվ պատրաստվածության չափանիշների վերանայումը:

Հակառակորդի բնակչության և զինված ուժերի բարոյահոգեբանական վիճակի վրա ազդելու նպատակով ՀՕՈՒ-ն օգտագործում է ԱԲ-ի հիմքով գործող «խոր կեղծիքի[**]» *(deepfake)* տեխնոլոգիաներ և ապատեղեկատվության ավտոմատացված ռազմավարություններ *(automated disinformation strategies):* Կեղծ թվային պատումների (նարատիվներ) տարածումը և դրան հաջորդող հուզական ձեռնածությունը ՀՕՈՒ-ին հնարավորություն են տալիս հասարակական տրամադրությունների կառավարման միջոցով ազդելու հակառակորդի ռազմաքաղաքական ղեկավարության որոշումների վրա:

Այսօր ազդանշանային *(SIGINT),* մարդկային *(HUMINT)* և բաց աղբյուրների *(OSINT)* վրա հիմնված հետախուզության գործիքակազմը, որը համակցված է կիբեռդիտմամբ, հնարավորություն է տալիս հայտնաբերելու և ներթափանցելու հակառակորդի ազդեցության տեղեկատվական ցանցեր՝ նրա քարոզչությանը հակազդելու, պատումները չեզոքացնելու և յուրային տեղեկատվական ներգործությունն ուժեղացնելու նպատակով: Ըստ այդմ՝ օգտագործվում են արհեստական բանականությամբ աշխատող ծրագրեր, օրինակ՝ ավտոմատացված բոտեր և այլն, ու «թվային անձերի» օպերացիաներ *(digital persona operations):*

Ռադիոէլեկտրոնային պայքարի և տիեզերական հետախուզության միջոցների ինտեգրում ՀՕՈՒ-ի գործիքակազմում: Իր առջև դրված խնդիրների արդյունավետ կատարման նպատակով առաջավոր բանակներում ՀՕՈՒ-ն զարգացնում է իր օպերատիվ կարողությունները՝ հակառակորդի հետախուզական, ուղեվարական համակարգերի և ռազմական կապի արբանյակների խափանման նպատակով ինտեգրելով հակաարբանյակային գործողությունների տարրերը: Ընդ որում, ԱՄՆ-ի Կոնգրեսի հետազոտական ծառայության 2023 թ. զեկույցում շեշտադրվում է հակաարբանյակային գործողություններում ոչ միայն խոցման կինետիկ միջոցների (օրինակ՝ ուղղորդվող հրթիռներ), այլև ռադիոէլեկտրոնային խանգարումների ու բարձր էներ-

[*] Խոսքը, մասնավորապես, «Սենդուորմ» *(Sandworm APT28)* կիբեռլրտեսական խմբի մասին է, որի գոյությունը կապվում է Ռուսաստանի Գերագույն շտաբի գլխավոր հետախուզական վարչության հետ (տես “Russia behind cyber-attack on satellite network, UK and US say”. “BBC”, 2022 (https://www.bbc.com/news/world-europe-61233092)):

[**] 2022 թ. մարտին սոցիալական մեդիայում տարածված տեսանյութում Ուկրաինայի Նախագահ Վլադիմիր Զելենսկին ուկրաինացի զինվորներին կոչ էր անում զենքը վայր դնելու և հանձնվելու: Այս դեպքը ԱԲ-ով գեներացված «խոր կեղծիքի» կիրառմամբ հասարակության շրջանում խառնաշփոթ առաջացնելու փորձի տիպիկ օրինակ է:

գիայով լազերների կիրառման կարևորությունը[20]: Վերջիններիս վերաբերյալ հրապարակային տվյալները սահմանափակ են՝ գաղտնիության պահանջի բերումով, այդուհանդերձ հայտնի է, որ ռուսաստանյան մշակման «Պերեսվետ» լազերային համակարգը ի զորու է խափանելու արբանյակների զգայարարների և օպտիկական սարքավորանքի աշխատանքը[21]:

Այսպիսով՝ հակաարբանյակային գործողությունները ներառում են արբանյակային կապի և համընդհանուր դիրքորոշումային համակարգի (ՀԴՀ, *GPS)* խափանումներ և ազդանշանային աղավաղումներ: ՀԴՀ ազդանշանի աղավաղման տեխնոլոգիաների լայնածավալ օգտագործման փաստագրված օրինակ է 2017 թ. հունիսին Սև ծովում առնվազն 20 նավերի ուղեվարական-տեղորոշումային համակարգերի խափանումը[22]: Նման դեպք գրանցվեց նաև 2018 թ. նոյեմբերին Նորվեգիայում և Ֆինլանդիայում ՆԱՏՕ-ի «Միասնական եռաժանի» *(Trident Juncture)* զորավարժության ժամանակ[23]: Միջադեպը մեծ միջազգային արձագանք ստացավ և շեշտեց ՀԴ համակարգերի խոցելիությունը և արդի անհամաչափ սպառնալիքների համատեքստում հատուկ օպերացիաներում տիեզերական տարածությունում առկա միջոցների և ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների համակցման արդյունավետությունը:

ՈՒժային բազմապատկում

Փոքր պետությունների կամ սահմանափակ թվակազմով զինված ուժեր ունեցող պետությունների համար ՀՕՈՒ-ի կիրառումը կարող է համակշռել հակառակորդի թվային և տեխնոլոգիական առավելությունը: Ոչ ավանդական և անհամաչափ մարտավարությունների կիրառմամբ ՀՕՈՒ-ն կարող է նշանակալի ազդեցություն ունենալ հակամարտության դինամիկայի վրա: Ըստ «ՌԷՆԴ» կորպորացիայի 2021 թ. «Հատուկ օպերացիաների ուժերի դերը ապագա հակամարտություններում» զեկույցի՝ փոքր պետությունները կարող են ՀՕՈՒ-ն օգտագործել հակառակորդի կառավարումը խափանելու, ռազմավարական նշանակությամբ օբյեկտները խոցելու և տեղեկատվական պատերազմի շրջանակներում հակառակորդի որոշումների կայացման վրա ազդելու համար[24]: Այս մոտեցումը փոքր պետություններին հնարավորություն

[20] Տես “Department of Defense Directed Energy Weapons: Background and Issues for Congress”. Congressional Research Service, 22 August 2023 (https://www.congress.gov/crs_external_products/R/PDF/R46925/R46925.7.pdf):

[21] Տես «Пересвет» (лазерный комплекс). «Большая Российская Энциклопедия» (https://bigenc.ru/c/peresvet-lazernyi-kompleks-2c3e41):

[22] Տես “Spoofing in the Black Sea: What really happened?”, 11 October 2017 (https://www.gpsworld.com/spoofing-in-the-black-sea-what-really-happened/):

[23] Տես “Chatham House report: Space – NATO cyber security’s weak spot” (https://ccdcoe.org/incyder-articles/chatham-house-report-space-nato-cyber-securitys-weak-spot/):

[24] Տես *E. Robinson, T. R. Heath, G. Tarini, D. Egel, M. Moesner, Ch. Curriden, D. Grossman, S. Lilly.* Strategic Disruption by Special Operations Forces. A concept for Proactive Campaigning Short of Traditional War, 5 December 2023 (https://www.rand.org/pubs/research_reports/RRA1794-1.html):

է տալիս արդյունավետորեն դիմագրավելու ավելի մեծ ուժերի սպառնալիքին և առանց լայնածավալ ռազմական ներգրավվածության հասնելու դրված ռազմավարական նպատակին:

ՀՕՈՒ-ի զարգացմանը և կիրառությանը տրվող կարևորության առումով ուշագրավ է այլ պետությունների փորձի ուսումնասիրությունը: Օրինակ՝ **Ֆինլանդիայի** պաշտպանության ռազմավարությունում ավանդաբար ՀՕՈՒ-ին վերապահվում է առանցքային դեր: Այս ուժերը պատասխանատու են ոչ ավանդական մարտավարությունների կիրառման, հակառակորդի թիկունքում դիվերսիոն և այլ գործողությունների ձեռնարկման համար: Հատկապես 2022 թ. սկսված ռուս-ուկրաինական զինված հակամարտության պայմաններում Ֆինլանդիան առանցքային կարևորություն է տալիս իր ՀՕՈՒ-ի կարողությունների զարգացմանը: Նրա հատուկ ստորաբաժանումները, մասնավորապես՝ Ութիի եգերական գունդը, մասնակցում են ՆԱՏՕ-ի և այլ համատեղ միջազգային զորավարժությունների («Աղեղ 23», «Հյուսիսային գրիֆոն 2024» և այլն), որոնք կենտրոնացած են հիբրիդային պատերազմի, դիվերսիոն գործողությունների, պաշտպանական գործողություններում անտառային և լեռնային լանդշաֆտի առանձնահատկությունների օգտագործման և թիկունքային հարձակումների մարտավարության վրա[25]:

Իսրայելի ՀՕՈՒ-ի կիրառումը պատերազմական իրավիճակներում, հատկապես՝ 2006 թ. Լիբանանյան երկրորդ պատերազմի ընթացքում, շեշտում է նրա ռազմավարական նշանակությունը: Այդ ժամանակահատվածում Իսրայելի Պաշտպանության բանակի ՀՕՈՒ-ի ստորաբաժանումները, ներառյալ՝ «Սայերեթ Մատկալը» և «Շալդագը», ձեռնարկել են մի շարք հատուկ գործողություններ «Հիզբոլլահի» զինված ենթակառուցվածքների դեմ: Մասնավորապես՝ 2006 թ. Լիբանանում «Բաալբեկ» օպերացիայի ժամանակ իսրայելական ՀՕՈՒ-ն ուղղաթիռներով ներխուժեց Բաալբեկ քաղաք՝ Դարշա հիվանդանոցում «Հիզբոլլահի» բազավորված ենթակառուցվածքները ոչնչացնելու նպատակով: Այս օպերացիան ցույց տվեց Իսրայելի ՀՕՈՒ-ի կարողությունը՝ գործելու հակառակորդի թիկունքում և հասցնելու դիվերսիոն հարվածներ առանց լայնածավալ ռազմական ներգրավվածության[26]:

Հատուկ օպերացիաների ուժերի կարողությունների զարգացում

Այսպիսով՝ արդի միջազգային ռազմաքաղաքական իրավիճակը, որը բնորոշվում է հիբրիդային և մետառազմավարական* մարտահրավերներով, պահանջում է համարժեք, այսինքն՝ «գորշ գոտու» գործողությունների՝ ոչ

[25] Տես “Utti Jaeger regiment’s main winter exercise to develop international joint operating capability”. “Joint Expeditionaty Force”, 8 February 2024 (https://jefnations.org/2024/02/08/utti-jaeger-regiments-main-winter-exercise-to-develop-international-joint-operating-capability/):

[26] Տես *B. Roggio.* IDF Commando Raid in Baalbek, Deep in the Bekaa Valley; Hezbollah Members Captured. “Long War Journal”, 2 August 2006 (https://www.longwarjournal.org/archives/2006/08/idf_commando_raid_in.php):

* Նկատի ունի մեծ տերությունների դեմ ուղղված մարտահրավերները: - *Խմբ.:*

ավանդական եղանակներով մարտական գործողությունների վարմանն ունակ հատուկ ուժերի պատրաստում և կատարելագործում: Զարգացած բանակների հատուկ ուժերի վերաբերյալ պաշտոնական հրապարակումներում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների ամփոփմամբ կարելի է եզրակացնել, որ նպատակահարմար է համարվում ՀՕՈՒ-ի օպերատիվ կարողությունները զարգացնել հետևյալ ուղղություններով միջոցառումների ձեռնարկմամբ.

- *տեխնոլոգիական արդիականացում.* գերակայություն տալ էժան, սակայն արդյունավետ տեխնոլոգիաներին, արհեստական բանականության կիրառմամբ հետախուզահարվածային միջոցներին, անօդաչու ապարատներին, կիբեռպատերազմի հարձակողական ու պաշտպանողական տեխնոլոգիաներին և տեղեկատվական ներգործության տեխնոլոգիաներին,
- *կառավարման համակարգին և մասնագիտական պատրաստմանը ներկայացվող պահանջների վերանայում.* կառավարման համակարգը պետք է ապահովի կենտրոնացված և ապակենտրոնացված որոշումների ընդունում կառավարման տարբեր մակարդակներում, ուսումնական ծրագրերը պետք է ապահովեն կիբեռպատերազմի, հոգեբանական օպերացիաների, հետախուզության և այլ ոլորտներում խոր մասնագիտական պատրաստում,
- *փոխգործության զարգացում.* ապահովել սովորական ուժերի, կիբեռստորաբաժանումների և հետախուզական ծառայությունների ճկուն գործակցությունը, ինչպես նաև բազմազգ զորավարժություններին մասնակցությունը, ինչով կբարձրացվի ՀՕՈՒ-ի արդյունավետության մակարդակը:

Եզրակացություն

Մերօրյա հակամարտություններն ի ցույց են դնում ավանդական և ոչ ավանդական պատերազմների միջև սահմանների տարրալուծումը, երբ լայնամասշտաբ ռազմական գործողություններում դիտվում են պարտիզանական պայքարին բնորոշ մարտավարություններ, իսկ նենգադուլը և տեղեկատվահոգեբանական գործողությունները դառնում են օպերացիաների անքակտելի մասը: Փորձի վերլուծությունը վկայում է, որ առավելություն է ստանում հակամարտության այն կողմը, որին հաջողվել է զարգացնել «գորշ գոտում» գործողություններ վարելու կարողություններ, ինչը նշանակում է, որ ապագայի պատերազմներին պատրաստ լինելու համար անհրաժեշտ է մշակել սովորական ռազմական կարողությունները և պատերազմի վարման անհամաչափ եղանակները համակցելու ստեղծագործ մոտեցում: Այս տեսանկյունից հակամարտային կամ քաղաքականապես զգայուն միջավայրներում արագ կողմնորոշվելու և գործելու թե՛ տարասեռ ուժերի կազմում, թե՛ ինքնուրույնաբար, վարելու ծածուկ գործողություններ, բոլոր տիրույթներում և չափումներում հակառակորդի ուժերն ու կարողությունները ջլատելու Հատուկ օպերացիաների ուժերի ունակությունը դիտվում է որպես օպերատիվ-մարտավարական և ռազմավարական խնդիրների լուծման գործուն միջոց:

Օժտված լինելով մեծ տարաշարժունությամբ, օպերատիվ ճկունությամբ և անուղղակի գործողություններ վարելու կարողություններով՝ ՀՕՈՒ-ն դառնում է ռազմավարական ռեսուրս հատկապես այն պետությունների համար, որոնք ձգտում են կատարելագործելու բազմատիրույթ սպառնալիքներին անհամաչափ եղանակներով արձագանքելու իրենց կարողությունները:

Պատերազմի վարման նոր եղանակներն ու գործիքները, հնարավոր գործողությունների կանխատեսվող բնույթն ու ներգրավվող ռեսուրսները ակնհայտորեն պահանջում են անվտանգային սպառնալիքներին դիմակայման նոր սկզբունքների որդեգրում: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության բանակի կերպափոխման հայեցակարգում որպես ՀՀ ռազմական անվտանգության հուսալի ապահովման տարրեր առանձնացվում են մի շարք բաղադրիչներ, որոնցից սույն թեմայի շրջանակներում ուշագրավ է, մասնավորապես, ՁՈՒ-ի կազմկառուցվածքային փոփոխություններով նախատեսվող՝ մարտական խնդիրների կատարման համար անհրաժեշտ ուժերի և միջոցների, մասնագիտացված ստորաբաժանումների ձևավորման, համալրման ու պատրաստման հայեցակետը: Կարելի է պնդել, որ այն զգայուն անվտանգային միջավայրում, որում կենսագործում է ՀՀ-ն, մասնագիտացված ստորաբաժանումների, մասնավորապես՝ հատուկ ուժերի, կարողությունների զարգացման կարևորությունն անհրաժեշտ է դիտել հիբրիդային և անհամաչափ մարտահրավերներին դիմակայելու և համարժեքորեն արձագանքելու, այդ թվում՝ ռազմական-քաղաքական ճնշման և ռազմավարական զսպման դիրքերից:

РАСТУЩАЯ РОЛЬ СИЛ СПЕЦИАЛЬНЫХ ОПЕРАЦИЙ В СОВРЕМЕННЫХ ВОЕННЫХ ДЕЙСТВИЯХ И ИХ ЗНАЧЕНИЕ ДЛЯ МАЛЫХ ГОСУДАРСТВ

А. Р. ДАВТЯН, полковник, начальник Центра исследований оперативного искусства НИУО МО РА – заместитель Начальника НИУО МО РА

РЕЗЮМЕ

Современные конфликты демонстрируют расплывание границ между традиционными и нетрадиционными войнами, когда в широкомасштабных военных действиях проявляется характерная для партизанской борьбы тактика, а саботаж и информационно-психологические действия становятся неотъемлемой частью операций. Анализ показывает, что преимущества добивается та сторона конфликта, которой удалось развить способности к ведению действий в «серой зоне», а это означает, что для готовности к войнам будущего необходимо выработать творческий подход к интеграции конвенционального военного потенциала и асимметричных способов ведения войны.

С этой точки зрения способность Сил специальных операций (ССО) в конфликтной или политически чувствительных средах быстро ориентироваться и действовать как в составе разнородных сил, так и

самостоятельно, вести скрытные действия, разобщать силы и возможности противника во всех доменах и измерениях рассматривается как эффективное средство решения оперативно-тактических и стратегических задач. Будучи наделенными большой маневренностью, оперативной гибкостью и способностью вести непрямые действия, ССО становятся стратегическим ресурсом в особенности для тех государств, которые стремятся совершенствовать свои возможности реагирования на многодоменные угрозы асимметричными способами.

Новые способы и инструменты ведения войны, прогнозируемый характер возможных действий и привлекаемые для этого ресурсы со всей очевидностью требуют выработки новых принципов противодействия угрозам безопасности.

THE INCREASING ROLE OF SPECIAL OPERATIONS IN CONTEMPORARY MILITARY ACTIONS AND THEIR IMPORTANCE FOR SMALL STATES

A. R. DAVTYAN, Colonel, Head, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA – Deputy Head, NDRU, MOD, RA

SUMMARY

Modern conflicts showcase how boundaries between traditional and non-traditional warfare blur, when large-scale hostilities convey features inherent in guerrilla warfare tactics, and sabotage and psychological actions become an integral part of operations. The analysis indicates that advantage is gained by the conflicting party which has managed to develop the ability to operate in the “gray zone”, assuming that in order to be prepared for the future wars, it is necessary to develop a creative approach to integrating conventional military potential and asymmetric methods of warfare.

In this sense, in conflict or politically sensitive environments the capabilities of Special Operation Forces (SOF) to quickly navigate and operate both as part of heterogeneous forces and independently, to conduct clandestine operations, and to separate the enemy’s forces and disunite capacities in all domains and dimensions are viewed as an effective means of solving operational and tactical and strategic tasks. With great maneuverability, operational agility, and the ability to conduct indirect actions, SOF are becoming a strategic resource, especially for those states that seek to improve their capabilities to deal with multi-domain threats in asymmetric ways.

Novel means and tools for warfare, the predictable nature of possible actions, as well as resources employed, obviously require the development of new principles for countering security threats.